

ԱՅՆ ԱՍՊԵՏ ՏՂԱՆ...

«... Ու կը թերթենք արեւն ինչպէս
Ապրիլ-մեռնիմն առէջ առէջ...»

Ա. Սեմա (Գեղամ Արմանեան)

Սա վերջալոյսի նըւաղկոտ պահուն,
Ես հանդիպակաց բըլուրի կողին,
Եւ փալիփքուսի հոծ ըստուերներուն
Տակ կը շրջէի յոյզով տրտմագին,
Խորիկելով քերքող տըղու մը մահուան,
«Ապրիլ-մեռնիմն»ի մարգագետնին վրան...:

Ու ծաղիկ մ'աղուոր, աչքի պէս վընիտ,
Կը հարցնէր ինձի — շանչցա՞ր քերքողն այն,
Որ օր մը փալեց ասպետի նըման
Իր գաղափարի լոյսին մէջ անջինջ.
Բայց մահն ահաւոր կտրեց իր քամբան
«Ապրիլ-մեռնիմն»ի ռազմադաշտին վրան...:

Յօշուեցաւ հոգիս վերքով մը խորին՝
Երբ անդրադարձայ իր ծաղիկ կեանքին,
Իր «Զըրահաւոր Գարուն» երգերուն...
Ըստուերներ մորմոխ սրտիս ցանեցին...
Ու հովը մեղմիկ մահերգն հեկեկաց
«Ապրիլ-մեռնիմն»ի դաշտին վրայ կանաչ...:

Այսօր ես դարձեալ կը շրջիմ միմակ
Եւ փալիփքուսի ըստուերներուն տակ,
Ու վշտամոլոր, անձկութեամբ լեցուն՝
Կը խորիկել նորէն այն Ասպետ Տըղուն...
Որ գարնան առտու մ'իմկաւ յեղակարծ
«Ապրիլ-մեռնիմն»ի հրախաղին դիմաց...:

Նալբուր

ՅՈՎՍԷՓ ԹԵՐԵՐԵԱՆ

ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԵՆԻ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ

(Թուական 460-473, Գեղտեմբեր 14)

Գրեց Հ. ՎԱՆԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Վազգէն — Բղէշի Գուգարբի
Շուշանիկ — Դուստր Վարդան Մամիկո-
նեանի եւ Կին Վաղդէնի
Զոյիկ — Եղբայր Վաղդէնի, հիւանդոտ եւ
տկարակազմ
Գայիանէ — Տեսչուհի աղջկանց վարժա-
րանի
Հռիփսիմէ — Փոխ տեսչուհի
Աշխէն
Սիրուշ
Զարուհի
Շողիկ
Փառանձեմ
Մարիամ

Աշակերտուհիներ

Սահականոյշ — Կին Վարդան Մամիկո-
նեանի, մայր Շուշանիկի
Խիկար — Անդարար եւ լրտես Սիւնեաց
Բակուր իշխանին
Սողոմէ — Նաժիշտ եւ մտերիմ Շուշանիկի
Վաչէ — Որդի Շուշանիկի
Օհան — Եպիսկոպոս Յուրտաւ քաղաքին
Վիտիկ մը — Գործակից Վաղդէնի
Պողտան — Դասճապետ Վաղդէնի
Երկու գիւղացիներ — Խօսուհ
Երկու բանտապահներ — Խօսուհ
Երկու քրմուհիներ — Խօսուհ
Զորս պահակներ — Մէկը խօսուհ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԻ

Գայիանէ — Տեսչուհի աղջկանց վարժա-
րանի
Հռիփսիմէ — Փոխ տեսչուհի
Սահականոյշ — Կին Վարդան Մամիկոնեա-
նի, մայր Շուշանիկի
Խիկար — Անդարար եւ լրտես Սիւնեաց
Բակուր իշխանի
Աշխէն
Սիրուշ
Զարուհի
Շողիկ
Փառանձեմ
Մարիամ
Երկու գիւղացիներ — Խօսուհ:

Աշակերտուհիներ

Տեսարանը կը ներկայացնէ Տալի ան-
տառներուն մէջ աղջիկներու վարժարան
մը. խորքը պալատ մը, աղջիկը մաղերով
մուտք. հրապարակ մը, ծառեր: Հանգըս-
տեան ժամանակն է:

Աշակերտուհիները աղնուական ընտա-
նիքներու աղջիկներ են. հազուաժամ են եր-
կար պարեգօտ, մէջքերնին դօտիով սեղ-
մած, մաղերնին երկար, եւ զլուխնին ա-
պարօշով (ժապաւէն) կապած: Ականջնուն
օղեր, վզերնուն մանեակ. գոյնզգոյն հո-
ղաթափներ հազուաժամ:

ՏԵՍԻՆ ԱՌԱՋԻՆ

Աշխեն և Սիրուշ

Աշխեն - (Բեմին վրայ միմակը եւ դուրս նայելով)։ Դուքսէն խնդալու ձայներ. Հա', հա', հա')։ Սիրուշ, ի՞նչ կայ, ինչո՞ւ կը խնդաք։

Սիրուշ - (Դուքսէն) Խենթ Ձարուկն է. կ'ըսէ թէ հովիւի հարս պիտի ըլլայ։

Աշխեն - Միշտ խենթ բան մը կը դռնէ ըսելիք։ (Դուքսէն դարձեալ ուժով խրկումներ. հա', հա', հա', հա', հա') Ի՞նչ կայ նորէն։

Սիրուշ - (Դուքսէն) Դարձեալ Ձարուկն է. գլխուն չալ մը քաշած՝ Սոնա տուտուն կը ձեւացնէ։ Հիմա կը տեսնես։ Խնդալիք բան է։

Աշխեն - Խենթուկ է, բայց շատ համա-կրելի է. եթէ ինքը չըլլայ, վարժարանը բանտ կ'ըլլայ։ Միշտ դուարձանալու բան մը կը դռնէ։ Խեղճ մեծաւորուհի, հողին ելաւ խրատելով։ Երբ «Ձարուկ, դասերդ սորվէ» կ'ըսեն, «ես վարդապետ պիտի չըլլամ», կը պատասխանէ։ «Ձարուկ, քիչ մը լուրջ եղիւր»։ «ես լալու չեմ եկած» կ'ըլլայ իր խօսքը։

ՏԵՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Ներս կը մտնեն Ջարուհի, Փառանգեմ, Սիրուշ, Մարիամ եւ Շողիկ եւ վերինը

Ջարուհի - (Շալ մը ուսերուն, ձեռքին գաւազան մը, մէջքը կոր եւ դողդոջուն, շրջապատուած աղջիկներէն. ձայնը դողդողացնելով) Ձաւակներս, աղիքներս, ձեր հողուն մատաղ, ինծի պէս չըլլաք։

Մարիամ - Սոնա տուտու, պարսիկ զինուորը քեզ ի՞նչպէս փախցուց։

Ջարուհի - Ա՛հ, մի՛ ըսեր, հողիս, բան մ'էր եղաւ։

Փառանգեմ - Սոնա տուտու, դու քանի՞ տարեկան ես։

Ջարուհի - Դեռ դարձան ծաղիկ եմ։

Աշխեն - Սոս՛... Մեծաւոր մայրը... (Բոլորը լրջութիւն ձեւացնելով՝ կը կարդան)։

Մարիամ - Ձարուկ, սաղմոսը զոյ սորվեցա՞ր։

Ջարուհի - (Շալը վար առնելով) Շատ խոշոր բառեր են, զլուխ չեն մտներ... Ողորմեա ինձ... ողորմեա ինձ...։ Աստուած քեզի ողորմի, խեղճ Ձարուկ։ (Ինքնիրեն) Աս կուսաններն ալ մինչեւ վերջ սաղմոս եւ աղօթք կը սորվեցնեն։ Ի՞նչ կ'ըլլար եթէ քիչ մը ուրիշ երգեր ալ սորվէինք։

Մարիամ - Ձարուկ, ի՞նչ կ'ըսես, մեծաւորուհին չլսէ, քեզ կը վռնտէ։

Ջարուկ - Ուղածս ալ այդ է արդէն։ Սաղմոս կարգալով պիտի խենթեմ։

Սիրուշ - Այդ Բոյր Հոփսիմէն ալ պահի պէս քովերէն չի հեռանար։ Հեռուն անկիւնը նստեր՝ աչքերը դնակի պէս ասդին անդին կը դարձնէ։

Շողիկ - Գլխուն պէտք է երկաթէ սաղաարտ զնել եւ ձեռքը նիզակ մը տալ։

Փառանգեմ - Ձարուկ, ո՞վ էր այն մարդարէն որ Դանիէլին կերակուր տարաւ։

Ջարուհի - Ընչա՞նչ տար հարցնելիք անձը։ Ես ի՞նչ գիտնամ թէ ով էր։

Մարիամ - Կարծեմ Ամբակում կը կոչուէր։

Փառանգեմ - Ինչ աղեղ անուն է։

Ջարուհի - (Ձեռքի քուղբը գետին նետելով) Պիտի պայթիմ, ալ չեմ գիտնար, չեմ սորվիր, չեմ սորվիր (ուռքերը գետին կը գարնէ)։

Շողիկ - (Դուքսէն Բոյր Հոփսիմէն ուժով կը հագայ) Ձարուհի, պահակը հազայ, ուշադիր։

Ջարուհի - (Թուղքերն հաւաքելով) Ողորմեա ինձ... ողորմեա ինձ...։

Փառանգեմ - Շնորհակալ ըլլանք որ հայերէն լեզուով կը սորվինք. իմ մայրս ասորերէն սորված է։ Երբեմն զիւրքը կը բանայ եւ «Աւրաշալիմ, աւրաշալիմ սալամաթ» կ'ըսէ։

Շողիկ - Իմ մայրս ալ յունարէն լեզուով սորված է. տոքսա... սի... տոքսա...։

Մարիամ - Եւ մենք զժողո՛հ ենք. փառք տանք Աստուծոյ որ հայերէն զիւր ունինք, լեզու ունինք։

Ջարուհի - Ես ասորերէն սորվէի... կ'երթայի ինքզինքս դեռ կը նետէի, կամ ձի մը առած կը փախչէի (Բեմին ներսէն Բոյր Հոփսիմէն ուժով հագը կը լսուի)։

Շողիկ - (Կամաց) Աղջիկներ, պահակը հազայ... (բարձր) Ամբակում... Ամբակում...

Փառանգեմ - Գիտէ՞ք, կ'ըսեն թէ Միւնեայ Անդեղիկ թերթին մէջ աղջկանց վարժարան պիտի բանան եւ պարսկերէն ալ պիտի սորվեցնեն։ Նոյնիսկ պարսիկ աղջիկներ ալ պիտի ընդունին։

Շողիկ - Ձարուհի, զնա՛ այդ վարժարանին տեսչուհին եղիւր, դու շատ յարմար ես, պար ու երգ կը սորվեցնես։

Ջարուհի - Գէշ չ'ըլլար, մէկիկ մէկիկ կը կարգեմ եւ ամէն օր հարսնիք կ'ընենք։ Շողիկ քեզ ալ փոխ տեսչուհի կ'ընեմ, որ անկիւնը նստած հազաս, Բոյր Հոփսիմէն պէս։

Մարիամ - Կեցէ՛ք, Բոյր Հոփսիմէն անդին սկսաւ երթալ (Դուքսէն Բոյր Հոփսիմէն կը պոռայ - Սանդուխտ, ահա կանջներդ կը քաշեմ)։ Աղջիկներու միւս խումբին դնայ։

Շողիկ - (Զգեստին տակէն չուան մը հանելով կը սկսի ցատկել) Հո՛փ, հո՛փ, հո՛փ, հո՛փ...

Ջարուհի - (Մեկուսի կ'երգէ)

Իմ սիրելին հովիւ էր

Սարի լանջին հեռուոր.

Մէջքին կամարն արծաթ էր

Նոր լուսնակի պէս աղուոր։

Աշխեն - Ձարուհի, խենթ աղջիկ, ի՞նչ կ'երգես. եթէ Մեծաւոր Մայրը լսէ...։

Ջարուհի - Մէկ պատիժ աւելի. արդէն վարժեր եմ. շատ շատ դպրոցէն պիտի վռնտէ, ուղածս ալ ատ է արդէն։ (Յօրանցելով) Տէր ողորմեա Ձարուհին, ողորմեա ինձ... ինձ... ինձ։

Փառանգեմ - Սիրուշ, այսօր Հայոց պատմութիւն ունի՞նք։

Սիրուշ - Այո, Մեծն Տիգրան պիտի սորվինք։

Փառանգեմ - Լսեցի՞ք թէ Տարօնի Խոր-

նի զիւրէն մեծ գիտնական մը, Մովսէս անունով, Հայոց պատմութիւնը զրեր է։ Հայրիկս Բաղրատուններու դղեակին մէջ կարգացեր է, կ'ըսէր թէ հիանալի է։ Ի՞նչ քաջեր, ի՞նչ մեծ թաղաւորներ ունինք եղեր, լուր չունէինք. հազիւ քանի մը անուններ լսած էինք։

Ջարուհի - Վա՛յ մեզի՛ եթէ ատ ալ վրան աւելցնենք. գէթ սա Հրեաներուն պատմութիւնը վերցնէին։ Ինծի ի՞նչ Մաթուսաղա, Ամբակում, Մովսէս, Իսրա-հիմ։ Այդ զիւրքին մէջ սրտայոյղ պատմութիւններ ալ կա՞ն։

Փառանգեմ - Աղջիկ, վէպ չէ դրածը, պատմութիւն է։

Ջարուհի - Դուք ալ բան չես գիտեր, կարծես թէ պատմութեան մէջ ամուսնութիւն, հարսնիք չ'ըլլար։

Սիրուշ - Ես ձանձրացայ սորվելէն։

Մարիամ - Ես ալ ձանձրացայ։

Աշխեն - Գլուխս քար դարձաւ։

Շողիկ - Ալ միտքս բան չի մտներ։

Ջարուհի - Եկէ՛ք, պար մը բռնենք, քիչ մը ոտքերնիս շարժենք։

Բոլորը - Այո՛, պար մը, պար մը բռնենք։

Աշխեն - Ո՞ր պարը։

Ջարուհի - Հովիւի պարը։

Մարիամ - Ո՛չ, աղանձներու պարը։

Փառանգեմ - Ո՛չ, աչկապուկի պարն աւելի զեղեցիկ է։

Բոլորը - Աչկապուկի պարը, աչկապուկի պարն աղուոր է։

Շողիկ - Որո՞նք աչքերը կապենք։

Բոլորը - (Բացի Ջարուհիէն) Ձարուհին, Ձարուհին, ամէնէն յարմարն է։

(Թաշկինակով կը կապեն Ջարուհին աչքերը եւ շուրջը պար բռնած կ'երգեն)

Բրոնէ, բրոնէ թէ կրնաս

Դարձիւր ասդին, շուտ եկուր.

Մօտ ես արդէն, ձեռքդ տուր,

Բրոնէ, բրոնէ թէ կրնաս։

Սեւ բախտն աչքերդ է կապեր,

Ձեռք աղատեր, չենք բանար.

Դուն աղջիկ չես խաղընկեր,

Շըրջմովիկ ես մեզ համար։

Շուրջը պարով կը խաղանք.
Բըռնէ, բըռնէ թէ կընաս.
Փերիններ ենք, ալ չըկանք.
Բըռնէ, բըռնէ թէ կընաս...:

Մարիամ - Մեծաւոր Մայրը... (Խակոյն կը փակուին):

Աշխէն - Ո՛հ, ուրիշ տիկին մը կը տեսնուի...

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Սահականոյշ, Շուշան վարդենի եւ վերինները (Գայիանէ դուրսէն):

Սահականոյշ - (Շուշան վարդենիին ձեռքէն բռնած ներս մտնելով) Կը փախաքէի Մեծաւոր Մայրը տեսնել:

Մարիամ - (Բեմէն դէպի դուրս կանչելով) Մեծաւոր Մայրը...

Գայիանէ - (Բեմի դուրսէն պոռալով) Ի՞նչ կայ, Մարիամ...

Զարուհի - Տիկին մը ձեզ կ'ուզէ տեսնել:

Գայիանէ - (Միշտ դուրսէն) Հիմա կու գամ...

Աշխէն - (Արտ մը հրամցնելով) Խընդրեմ նստեցէք, հիմա կու գայ Մեծաւոր Մայրը:

Մարիամ - (Մարիամ, Սիրուշ եւ Շուղիլ բոլորակ մը կազմած) Շողիկ, ո՞վ է այս տիկինը:

Փառանձեմ - (Զարուհի, Փառանձեմ, Աշխէն, միասին բոլորակ կազմած. շատ ցած) Ո՞վ է այս տիկինը:

Զարուհի - Վարդի պէս սիրուն աղջիկ մ'ունի. բայց ո՞վ է այս տիկինը:

Մարիամ - (Մօտենալով Զարուհիին) Զարուհի, զիտե՞ս ով է այս տիկինը:

Զարուհի - Նոր կը տեսնեմ: Նայէ՛, նուստի պէս սիրուն աղջիկ մ'ունի:

Սիրուշ - Վախ, քու ըլլամ. Սահականոյշն է. Մեծն վարդանի տիկինը. անգամ մը զինքը Ամատունիներու զգեստին մէջ տեսայ:

Շողիկ - (Միւսները հետաքրքիր մօտենալով եւ մէկ խումբ կազմելով) Այո՛,

ինքն է: Ես ալ Խորխոռունիներու քով տեսած եմ:

Սիրուշ - Աստուած իմ, որքան փոխուած է, կարծես ութսուն տարեկան պառու է:

Շողիկ - Խեղճ տիկին, ամուսինին մահէն վերջ կեանքը բանտերու մէջ անցուց, անարդարած՝ Պարսիկներէն:

Մարիամ - Մեղրամոմի դոյն ունի:

Աշխէն - Զիւնապատ զլուխ մը:

Սիրուշ - Բայց նորէն հին զգեստի մը պէս վաւեր է:

Զարուհի - Լսեր եմ թէ երիտասարդութեանը Հայաստանի ամէնէն զեղեցիկ տիկինն է եղեր:

Շողիկ - Եւ կըթուած, աղնուաշուք:

Սիրուշ - Խօսիլը լսես՝ կը դարմանաս, շաքարի պէս անոյշ է. թարմ հացի պէս համով է:

Զարուհի - Արդեօք ինքն ալ զպրոց դպրոց է:

Սիրուշ - Այո՛, ինքը պատմեց թէ երբ նոր հայերէն դպրոց բացեր են, առաջին վարդաներէն եղած է:

Մարիամ - Ի հարկէ. հայր մը ունէր որ մեր ամենամեծ Հայրապետն եղաւ:

Աշխէն - Սահակ հայրապետին աղջիկն է, ըսել կ'ուզես:

Մարիամ - Այո՛:

Աշխէն - Ո՛հ, կը սխալիս, Բաղրատունեաց մեծ տոհմէն է:

Մարիամ - Դուն կը սխալիս: Սիրուշին հարցնենք: Սիրուշ, Սահակ Հայրապետին աղջիկն է թէ Բաղրատունեաց տոհմէն է:

Սիրուշ - Սահակ Հայրապետին աղջիկն է:

Փառանձեմ - Վայրենիի պէս հեռու կեցեր ենք. երթանք հետը խօսինք:

Շողիկ - Կեցի՛ր, Մեծաւոր Մայրը կը բարկանայ՝ եթէ օտարին հետ խօսինք:

Փառանձեմ - Երիտասարդ մը է՞ որ վախ ունենանք կամ կասկած. մեր մեծ մայրիկը կրնայ ըլլալ:

Սիրուշ - Նայեցէ՛ք, երեսին վրայ անհանգիստ խռովք մ'ունի:

Շողիկ - Ի՞նչ կ'ուզես. ամուսինին մահէն

հէն յետոյ պաշտպան մը չունեցաւ: Վա՛յ անոր որ այս զիւարդաշա Պարսիկներու ժամանակ որը եւ մինակ է:

Մարիամ - Զեքը բռնած աղջիկն ո՞վ է:

Սիրուշ - Շուշան վարդենի կը կոչուի. իր միակ աղջիկն է:

Աշխէն - Անշուշտ զպրոց դնելու բերած է. ես պիտի ըլլամ առաջին բարեկամուհին: Իմ հայրիկս ալ վարդանի բանակին մէջ կուտած է:

Զարուհի - Ուրիշ թշուառ մ'ալ տեսիլ:

Փառանձեմ - Ի՞նչ զեղեցիկ ալ աղջիկ է. իսկապէս վարդ ու շուշան է կարծես:

Շողիկ - Կ'ըսեն թէ Սիւնեաց Բակուր իշխանն իր ձեռքն ուղեր է, մերժեր են:

Մարիամ - Ի հարկէ է, մատնիչի մը տըլուն հարս կու տան:

Սիրուշ - Բոլոր աղնուական ընտանիքները պիտի բողոքէին:

Աշխէն - Քաղաքական պատերազմ կըրնար ծագիլ: Բակուրի հայրն էր պատճառը որ այնքան հերոսներ մեռան Աւարայրի մէջ:

Զարուհի - Այնքան մայրեր լացին, հարսեր այրի մնացին, ըսէ:

Փառանձեմ - Եւ հաղարարու որերն անտէր մնացին:

Աշխէն - Իր անունն ու յիշատակը սեւ հողին մէջ մնայ:

Զարուհի - (Բեմէն դուրս նայելով) Մեծաւոր Մայրը կու գայ: Ողորմեա ինձ... ողորմեա ինձ:

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ

Մայր Գայիանէ եւ վերինները

Գայիանէ - (Բեմին անկիւնը կայնած եւ զարմացական) Ո՛հ, դժբա՛նք էք, աղնուափայլ Տիկին. այս ի՞նչ շնորհք. ինչո՞ւ չըսեք թէ դուք էիք. ներողութիւն, ձեզ սպասցուցի. շատ ներողութիւն:

Սահականոյշ - Շնորհքն իմն է որ արժանի եղայ այս սեւ օրերուն ձեր երեսը տեսնելու:

Գայիանէ - Արժանի ըլլանք Աստուծոյ սուրբ երեսը տեսնելու:

Աղջիկները - (Բոլորը միասին, փիչ մը երգով) Ամէն:

Գայիանէ - Դուք դասերնիդ սորվեցէք (Լուրջ):

Սահականոյշ - Քոյր իմ, դուն չես զիտեր թէ ի՞նչ մեծ վտանգ մը զիս հոս բերաւ:

Գայիանէ - Վատ՞նդ մը. Աստուած չընէ:

Սահականոյշ - Այո՛, չարաղէտ վտանգ մը այս աղջկանս համար:

Գայիանէ - Նորէ՞ն Պարսիկները (կը նստին երկու կոնգերու վրայ):

Զարուհի - Ներողութիւն, Մեծաւոր Մայր, Ազամ Եւան ի՞նչ լեզուով կը խօսէին:

Գայիանէ - Գնա՛, Քոյր Հովսեփի՛ն հարցուր. չե՞ս տեսներ որ հիւր կայ քոյս:

Զարուհի - (Միւս աղջիկները ցած կը խնդան) Ըսաւ որ ձեզի հարցնեմ. ինքը չի զիտեր:

Գայիանէ - (Ինքնիւրեմ) Տէր ողորմեա, տէր ողորմեա: Աղջի՛կ, երեսդ պատուէր է:

Զարուհի - Ոչ, Մեծաւոր Մայր, կատակ չեմ ըներ. զրաւի եկեր ենք Սիրուշին հետ: Ինքը կ'ըսէ թէ ասորերէն կը խօսէին. ես կ'ըսեմ թէ հայերէն կը խօսէին:

Գայիանէ - Անշուշտ հայերէն կը խօսէին. չե՞ս զիտեր թէ դրախտը Հայաստանի մէջն էր:

Զարուհի - (Պոռալով) Սիրո՛ւշ, յաղթուած ես (Միւսները կը խնդան):

Գայիանէ - Ա՛խ Զարուհի, ա՛խ Զարուհի: Ինչ եւ իցէ: (Դառնալով Սահականոյշին) Ուրեմն, կ'ըսէիք թէ Պարսիկները չեն. հապա ո՞վ է:

Սահականոյշ - Աւելի չար մէկը: Սիւնեաց Բակուր իշխանը երգուրնցեր է ամէն զնով աղջիկս կին առնել. յափշտակել, եթէ հարկ ըլլայ: Ես ի՞նչպէս մատնիչի մը տղուն հարս տամ աղջիկս: Հայրը զերեզմանէն երեսիս պիտի պոռայ. զիս դաւաճան, հրէշ պիտի կոչէ: Ամուսինիս յիշատակը նախատած պիտի ըլլամ:

(Երկու ձեռքերով երեսը գոցած) Ո՛հ, ոչ, ոչ. աւելի կը նախընտրեմ զինքը ձեռքովս մորթել, կրակ նետել, սեւ հո-

զին յանձնել, քան դաւաճանի մը զերկը: (Ուժով) Ո՛հ, ո՛հ, Բաղդադ, դուն այս վարդը չես կրնար համբուրել: զնա պարսկուհիի մը հետ ամուսնացիր: քու հօրդ եւ քեզի այդ կը վայելէ:

Սիրուշ - (Ընկերներուն հետ ցած եւ մեկուսի) Խեղճ տիկին, ի՞նչ հողեկան դառն վիճակ ունի:

Աղջիկները - (Բոլորը միասին կը պոռան) Թող պարսիկի հետ ամուսնանայ:

Շուշան Վարդենի - Մայրի՛կ, եթէ այդ ցաւերդ ինծի համար են, այսօր իսկ կ'երթամ եւ Կարսի գետը կը նետուիմ, ամէն բան կը վերջանայ:

Սահականոյշ - Աղջի՛կս, մաղիդ դպչելու համար պէտք է հօրդ գերեզմանին վրայէն անցնին. եւ հօրդ գերեզմանը Աստուծոյ աթոռն է:

Գայիանէ - Թէպէտ Հայաստան գեոխաղաղութիւն չէ դտած եւ սինլըր զինուորներ, թափառական Պարսիկներ կ'առեւանդեն, կը կողոպտեն, սակայն այս երկիրը չէ մեռած. կան բանակներ՝ որ կրնան նորէն սուր վերցնել եւ Վարդանի միակ ծաղիկը պաշտպանել:

Սահականոյշ - Իսկապէս երանի՛ ձեզի, որ Տայքի այս հեռուոր անտառներուն մէջ քիչ թէ շատ ապահով էք. Պարսիկները կը վախեն այս երկրէն: Մինչ մեր գեղեցիկ երկիրը բոլորովին աւերակ դարձած է, գիւղերն ամառի, դաշտերն անմշակ. աղետակները թառած իրենց դըղեակներուն մէջ. մինչեւ իսկ, սովէն, մայրեր իրենց զաւակները կերած են:

Գայիանէ - Աստուած իմ, ի՞նչ կ'ըսէք:

Սահականոյշ - Խորթութիւններու տիկինը կախեցին եւ սպաննեցին Պարսիկները. չուղեց իր հաւատքն ուրանալ, մեռաւ քաջ նահատակի պէս:

Գայիանէ - Մի՛ ըսէք, կ'աղաչեմ, աղջիկը մեր քովն է, չլսէ: Խեղճ Սանդուխտ, դուն ալ որը մնացիր: Անիճեա՛լ աւազակներ, թող ձեր թաղաւորութիւնը ձեր վրայ փրկէ: Պատանքդ ստատանները կարեն, չա՛ր Յազկերտ (Ջալալին ձեռքին օղի մէջ):

Սահականոյշ - Քանի՛ անմեղ բերաններ

բէ անէ՞քներ լսեց եւ գեո այդ վիշապը կ'ապրի:

Գայիանէ - Բայց դուն ի՞նչպէս վտանգաւոր ճամբաներ կտրելով՝ Տարօնի Ողական բերդէն հոս եկար:

Սահականոյշ - Մենք Ողականի մէջ չենք բնակիր: Տայքի մեր կալուածներուն մէջ քաշուեցանք: Հոս աւելի ապահով է: Ունինք Սասունցիներու ուժեղ վաշտ մը՝ մեր բերդը պաշտպանելու համար:

Գայիանէ - Կը տեսնե՞ս այս օրիորդները, աղետակներու աղջիկներ են. շատերուն հայրերը Վարդանի բանակներուն մէջ կոռւած են, ոմանք մեռած են. եւ այս խեղճերէն շատեր իրենց հայրերը չեն ճանչցած:

Սահականոյշ - Ուրեմն Շուշանիկս բախտակից ընկերուհիներ ալ պիտի ունենայ:

Գայիանէ - Այո՛, թռչուններ, անտառներու մէջ ապաստանած: Ամէն օր սիրտս դող կը մտնէ, թէ մի գուցէ չար վտանգ մը հասնի: Ուրիշ աղօթք չունիմ՝ եթէ ոչ «Աստուած, այս ծաղիկներն անարատ պահէ»: Բոլոր աղղը լաւ օրերու կը սպասէ եւ լաւ օրերը կ'ուշանան:

Սահականոյշ - Մեր աղղային վէրքն անմխարանութիւնն է, քոյր իմ: Այս գլխաւոր կացութեան մէջն իսկ՝ մեր իշխանները քովէ քով չեն դար, դարման մը տանելու. միայն Վահանը մնացեր է, Հմայեակին օրդին, անփորձ երիտասարդ մը, որ լեռնէ լեռ, բերդէ բերդ ինկած է՝ Պարսիկ հալածելու համար:

Գայիանէ - Աղթենք եւ յուսանք որ Աւարայրի զիւղաղներուն արիւնը նոր սերունդ հասցնէ:

Սահականոյշ - Շուշանիկս բերի քու խնամքիդ յանձնելու. կ'ուզեմ որ լաւ զատարակուի: Վարժարանիդ անունը ծանօթ է ամէն տեղ: Վստահ եմ թէ ապահով տեղ է, պաշտպանուած է վտանգներէ: Աղջիկս բարեսիրտ եւ ջերմեռանդ է, բայց շատ կրակոտ նկարագիր ունի, յանդուգն եւ անվախ է, եւ անխոհեմ: Շատ կը խնդրեմ որ վարժարանէն դուրս չելլէ, մէկուն հետ չտեսնուի, մանաւանդ

անծանօթ անձերու հետ: Բախուր ստուերի պէս մեր հեռքերուն ետեւէն կը քալէ: Դուն ես իր մայրը, պահէ զայն՝ ինչպէս թանկագին մարդարիտ մը:

Գայիանէ - Բախուր գիտէ՞ թէ այստեղ բերած ես:

Սահականոյշ - Չեմ կարծեր թէ գիտնայ, սակայն ստատանան ամէն կողմ կը շրջի, լրտեսներ դրած է՝ աղջկանս հետքը գտնելու համար: Անգամ մը փորձեց յափշտակել, բայց ամօթով ետ դարձաւ:

Գայիանէ - Մենք բաւական պաշտպանուած ենք, մասնաւոր խնամքով սրտիս քով պիտի պահեմ. անհուկ եղիր, յետոյ Քոյր Հոխիսիմէն կայ որ աչքը անոնց վրայէն չի հեռացներ: Ի՞նչ ընենք, մեծկակ աղջիկներ են, երեւակայութիւննին վառ է: Իմ սիրտս ալ յաճախ կը տրոփէ ամէն շուրջի համար:

Սահականոյշ - Սիրտս է որ քեզի կը յանձնեմ, ալ դուն գիտես: Ես պէտք է աճապարեմ այս երեկոյ Բաղրատունիներու բերդն հասնիլ, որ ամէնէն մօտն է:

Գայիանէ - (Գեղի աղջիկները) Զարուհի, Քոյր Հոխիսիմէն կանչէ:

Զարուհի - (Ինքնիքն) Խեղճ Շուշանիկ, չես գիտեր թէ ինչ ոստիկանի կը յանձնէ քեզ: (Գեղի դուրս պոռալով) Քոյր Հոխիսիմէն, Մեծաւոր Մայրը քեզ կ'ուզէ:

ՏԵՍԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Քոյր Հոխիսիմէն եւ վերինները

Սահականոյշ - Բաւական աշակերտութիւններ ունի՞ք:

Գայիանէ - Շուրջ հարիւր յիսուն հատ: Ընդհանրապէս ուխտապահ նախարարներու եւ աղետակներու աղջիկներ են:

Սահականոյշ - Անշուշտ բաւական ուսում ալ կ'առնեն:

Գայիանէ - Սաղմոս կարդալ, պատմութիւն սորվիլ, քիչ մը գրել եւ աղօթք կը սորվեցնենք:

Հոխիսիմէն - (Բեմ ելլելով) Հրամայէք, Մեծաւոր Մայր:

Գայիանէ - Քեզի ներկայացնեմ իշխա-

նուհի Սահականոյշը, մեր զիւղաղն Վարդանի կողակիցը եւ իր աղջիկը Շուշանիկ: Հոխիսիմէն - Ի՞նչ կ'ըսէք, ուրեմն դուք զինքը տեսե՞ք էք:

Գայիանէ - Ի՞նչ հարցում է, Քոյր Հոխիսիմէն. ի հարկ է տեսեր է:

Հոխիսիմէն - Երանի՛ ձեր աչքերուն: Գայիանէ - Նայէ, Քոյր Հոխիսիմէն, ի՞նչ կ'ըսէ. կ'ուզէ որ իր աղջնակը մասնաւոր հսկողութեան տակ ըլլայ: Երեւք միշտ կը հրապարակէն դուրս չելլէ, ոչ մէկ օտարականի հետ խօսի, ոչ մէկ նամակ՝ մէկուն կամ միւսին. քիչ մտերմութիւն, շատ աղօթք. ոչ ոք գիտնայ իր հոս ըլլալը:

Սահականոյշ - Դուրսէն մէկուն հետ չտեսնուի:

Գայիանէ - (Գեղի աղջիկները) Դուք գտանիդ սորվեցէք, ի՞նչ տկանջնիդ այս կողմն է, հետաքրքիրներ:

Զարուհի - (Ինքնիքն) Խեղճ Շուշանիկ... Հոխիսիմէն - Նորէն Զարուհին է: Ի՞նչ պատիժ տալ ասոր, Մեծաւոր Մայր, կատարեալ վայրի թռչուն մ'է:

Զարուհի - (Ինքնիքն) Հող մի՛ ընէր, Շուշանիկ, յետոյ ես քեզի պէտք եղած գտները կու տամ:

Շուշիկ - Աղջի՛կ, լուռ կեցիր:

Գայիանէ - Զարեհն աւելի անհանգստ մէկն է, պէտք է ճամբել, բայց Կամսարականներուն աղջիկն է. հայրը, Արշաւիր, սիրելի բարեկամս է, անոր համար կը համբերեմ. սրտով աղջիկ է. նուիրուող է, միայն սիրելի խենթուկ մ'է:

Սահականոյշ - Մարդու ապաղան իր սրտն կախում ունի, եթէ բարի եւ ընկերասէր է, արդէն կը բաւէ: Ուրեմն, Քոյր Հոխիսիմէն ուսերուն անհանգիստ Շուշանիկս ալ բեռ պիտի ըլլայ:

Հոխիսիմէն - Ես այդպիսի տիպարները կը սիրեմ, աչքիս բերելուն պէս պիտի պահեմ:

Գայիանէ - Գիտես, Հոխի, թէ դատարկապորտներ շատ կան, աշուղներ՝ որ պատուհաններու տակ երգեր կը նուաղեն. թող լուսամուտներէն վար չկախուի, աշխարհի երգեր մտիկ ընելու համար:

Շուշանիկ - Ես հոս չեմ կենար, ես բանտի մէջ չեմ կրնար ապրել. փոքր չեմ, զրեթէ քսան տարեկան եմ:

Զարուհի - Բանտն ալ խօսք է: Եթէ Բոյր Հոփին որթատունկի պէս մատնե-
րուն ապտակն ալ առնես...

Գայիանէ - Ո՞վ է այդ խօսողը:

Զարուհի - Ողորմեա ինձ, ինձ, ինձ...
Աստուած:

Սահականոյշ - Քու բարեբերը համար է, աղջիկս: Անմեղութիւնն երբեք չի դիտեր թէ չարութիւնն ի՞նչ դարձներ կը լարէ:

Գայիանէ - Աղամանդն ամէն մարդու ցոյց չեն տար, ապա թէ ոչ՝ դողերը կը շատնան:

Սահականոյշ - Ես դիտեմ թէ ինչ վը-
տանդներ անցուցած է: Գիշերները քուն չունէի, ցերեկը՝ հանդիստ: Սիւրտս թունդ կ'ելլէր երբ Շուշանիկ աչքէս հե-
ռու էր: Քանի՜ քանի անգամներ զինքը բռնած եմ բերդերու վրայ: Կը սիրէ ձիա-
վարել, որսի երթալ, ղէնքերու հետ խա-
զալ: Հօրս վրէժը պիտի առնեմ, կ'ըսէ յաճախ:

Զարուհի - (Մեկուսի) Ճիշտ իմ սիրած աղջիկս է:

Գայիանէ - (Բարձր) Ո՞վ է դարձեալ:

Զարուհի - (Բարձրաձայն) Ողորմեա ինձ, Աստուած, ողորմեա ինձ, ինձ, ինձ...

Գայիանէ - Երբ աղջիկ մը անխոհեմ է, իր գերեզմանը ինքը կը փորէ:

Զարուհի - Իսկ թուլամորթները՝ ծը-
նած օրէն արդէն մեռած են:

Փառանգեմ - (Մեկուսի) Զարուհ, զէշ պատիժ մը պիտի առնես:

Սահականոյշ - Շուշանիկ, յետոյ պի-
տի հասկնաս այս խտուրթեան պատճառ-
ները: Դուն զիտես թէ ինչ վտանգ ան-
ցուցիր: Եթէ հօրեղբորդ որդին Վահանը չըլլար, քեզ Սիւնիքի լեռներուն մէջ փա-
կած էին:

Հոփսիսիմէ - Մեծաւոր Մայր, դասա-
ժամը եկաւ:

Գայիանէ - Հնչեցուցէ՛ք կոջնակը (Պր-
դիմով ամանի մը վրայ քանի մը հար-
ուածներ կու տան: Աղջիկները կարգով
դասարան կը մտնեն):

Սահականոյշ - Քեզ տեսնեմ, Շուշա-
նիկս, նայէ որ բարի, ազնիւ եւ հնազանդ
ըլլաս: Սիրելի հօրդ յիշատակը չմոռնաս:
Իր պատերազմի մեկնելէն առաջ, դուն
չատ փոքր էիր, քեզ համբուրեց եւ ինծի
ըսաւ - Սահականոյշ, մեր պարտէզին մէջ
վարդ մը միայն ծլաւ, պահէ գայն իր մա-
քուր բողբոջին մէջ: Ես ողջ պիտի չդառ-
նամ: Դուն կը ժպտէիր խաղալով հօրդ
դանդուրներուն հետ, ես կու լայի: Կեան-
քէն աւելի գեղեցիկ մահ մը ունեցաւ.
չմոռնաս իր յիշատակը: (Սահականոյշ
քաշկիմակն աչքերուն՝ կու լայ եւ հեծե-
ծանքով կը շարունակէ) Մեծ հայր մը ու-
նեցար որ մեր եկեղեցիին ու աղբիւն
փառքն եղաւ, Սահակ հայրապետը: Սա-
հակ եւ Վարդան երկու արեւներ մեր եր-
կինքին վրայ. տաքցիր անոնց հողիով,
լուսաւորուէ անոնց ճառագայթներով:
Արժանի եղիր անոնց թոռն ու դաւակն ըլ-
լալու: Այս դպրոցն այլեւս քու նոր տունդ
է, քոյրերը քու մայրերդ, սիրէ զիրենք
եւ հնազանդ եղիր:

Շուշանիկ - (Հեծկլտալով) Մայրիկ, ես
առանց քեզի չեմ կրնար կենալ, այս տու-
նը վրաս պիտի փլչի: Ո՞տք տուր որ ա-
մէն օր պիտի դաս զիս տեսնելու:

Սահականոյշ - Ամէն օր կարելի բան
չէ, թերեւս ամիսն անգամ մը, կամ քիչ
մ'աւելի շուտ կարենամ գալ: Նայէ, քու
քովդ կը ձգեմ Տիրամօր պատկերն ու այս
Աւետարանը: Մեծ հայրիկդ յիշատակ-
ներն են, հայրդ ամէն զիշեր կը համբու-
րէր եւ այնպէս կը պառկէր: Հետը պա-
տերազմներու դաշտերը տարած է. միշտ
ծոցդ պահէ եւ աղօթէ ինծի համար ալ:
(Կը յանձնէ պատկերն ու Աւետարանը եւ
ապա ոտքի ելլելով՝ կը համբուրէ Շու-
շանիկը) Մնաք բարով, քոյրեր, մնաս
բարով աղջիկս (Մեկնելու կ'ըլլայ):

Գայիանէ - Այսպէս չ'ուտ, գէթ օջա-
րակ մ'առնէիք:

Սահականոյշ - Շատ աճապարանք ու-
նիմ, ուրիշ անգամ. արդէն սրտիս կէսն
հոս է: Առէ՛ք այս քսակ մը ոսկիներն ալ՝
աղջկանս ծախքերուն համար: Զեռքը

դրամ չտաք, դուք հողացէք ինչ որ պէտք
ունի:

Գայիանէ - Օրէնքով արդիւուած է քո-
վը դրամ պահել:

Շուշանիկ (Մեկուսի) Հրաշք պիտի ըլ-
լայ եթէ դրպաններս ալ չխառնեն:

Սահականոյշ - (Մեկնելով) Մնաք բա-
րով. քեզ տեսնեմ աղջիկս (Կրկին կը համ-
բուրէ Շուշանիկը):

Շուշանիկ - (Լալով աքոռին վրայ ին-
կած) Մայրիկ... մայրիկ...:

Գայիանէ - Լացը սիրոյ նշան է, ուրախ
եմ որ արցունքներ կը թափես, ըսել է թէ
զինքը շատ կը սիրես եւ խրատներն ալ
պիտի պահես:

Շուշանիկ - Պիտի տեսնե՞մ արդեօք
զինքը...: Ալ որք եմ... որք եմ...:

Գայիանէ - Երթանք աղջիկս, քեզ ծա-
նօթացնեմ ընկերուհիներուդ հետ. անոնց
չատերուն հայրերը Աւարայրի մէջ կըռ-
ուեր եւ մեռեր են: Քեզի սիրելի ընկերու-
հիներ պիտի ըլլան: Դպրոցին առաջին օ-
րերը դժուար են, բայց կը վարժիս. պի-
տի սիրես այս տունը: (Մինչ կը խօսի,
հեռուէն մեղմ երգի ձայն կու գայ) Կը
լսե՞ս, ահա իրենց երեկոյեան աղօթքը
կ'ընեն...:

Երեկոյեան աղօթքը մեր
Խուսկերուն հետ ընդունէ, Տէր.
Եւ թող իջնէ մեր սրտերուն
Շընորհքի մէջ քու սէրդ անհուն:

Դուն ալ յաւէտ եղիր, ով Մայր,
Մեր աչքերուն երկինք պայծառ.
Սուրբ ծիրանիդ տարածէ մեզ
Արեգակի շողերուն պէս:

Շուշանիկ - Ի՞նչ անոյշ երգ է, կարծես
հրեշտակներ երկինքէն բերած են այդ մե-
ղեղին:

Գայիանէ - Մեր քոյրերէն մէկը չինած
է. թէ՛ երաժիշտ եւ թէ՛ բանաստեղծ է:
Երթանք, աղջիկս, երթանք անկողինդ ու
դասարանդ ցոյց տալու, ընկերուհիներդ
քեզի կը սապսեն (կը մեկնին):

ՏԵՍԻՆ ՎԵՅԵՐՈՐԴ

Զարուհի եւ Սիրուշ

Զարուհի - (Ծառի մը ետեւէն բեմին
մէկ կողմը) Փսթ, փսթ. Սիրուշ, Սի-
րուշ...:

Սիրուշ - (Բեմին միւս կողմէն) Փսթ,
փսթ. Զարուհ, Զարուհ...:

Զարուհի - (Բեմին մէջ գալով) Սիրուշ,
քեզի կարեւոր ըսելիք ունիմ:

Սիրուշ - Ես ալ քեզի ըսելիք ունիմ:
Զարուհի - Ես այս դպրոցէն պիտի
փախչիմ:

Սիրուշ - Ես ալ կ'ուզեմ փախչիլ,
բայց... բայց...:

Զարուհի - Բայց, ի՞նչ...:
Սիրուշ - Պահակներն ամէն կողմ կը
հսկեն:

Զարուհի - Ատ ինծի թող. աղուէսի
պէս կը սահինք այս անտառուտ բլուրէն
վար: Ժամ մը անդին՝ մեր հողերը կը
սկսին. զիւղացիները լաւ կը ճանչնան,
անոնք մեզ կը պահեն:

Սիրուշ - Յետո՞յ:
Զարուհի - Յետոյ կառք մը կը վար-
ձենք, կամ ձիեր, եւ տուն կ'երթանք:

Սիրուշ - Շատ դիւրին բա՞ն կը կար-
ծես. կ'ըսեն թէ ամէն կողմ աւազակնե-
րով եւ թափառական երիտասարդներով
լեցուն է:

Զարուհի - Սուտ բան է, աղջիկ, մեզ
վախցնելու համար կ'ըսեն: Ես ալ չեմ
զիմանար. կատարեալ բանտ է: Երէկ
զիս անօթի ծարաւ ձգեցին: Ես կուտան
չեմ: (Ոտքերը գետին գարնելով) Ա՛լ չեմ
կենար, կապեն ալ՝ չեմ կենար:

Սիրուշ - Աղջի, կամաց, հիմա Մեծա-
ւոր Մայրը կը լսէ:

Զարուհի - Արդէն հօրս դրեցի դադ-
տուկ. «Շուտ հասի՛ր, եթէ ոչ՝ աղջիկդ
մեռած կը գտնես»:

Սիրուշ - Մազադաթ ուսկի՞ց դուրս:
Զարուհի - Փառանձեմին զրկած էին,
անկից կտոր մը առի:

Սիրուշ - Ես ալ կ'ուզէի փախչիլ՝ եթէ,
եթէ...:

Զարուհի - Եթէ ի՞նչ...:

Սիրուշ - Եթէ հայրենիս ողջ ըլլար: Նա Աւարայրին մէջ մեռաւ եւ մայրս դերի տարին. զիս հազիւ փախցուցին Պարսիկներու ձեռքէն: Հիմա մեր զգեստին ալ զրաւած են: (Լալազին) Որք եմ, Զարուհի, բոլորովին որք: Որքն զուր կըրնամ զարնել որ զիս ներս առնէ:

Զարուհի - Խեղճ ես, քեզի պէս աղջկան մը զգեստի կը պակսի:

Սիրուշ - Ի՞նչ, կ'ուզե՞ս որ վատ ճամբաներ երթամ:

Զարուհի - Աս ըսել չեմ ուզեր (Հեռաւոր երգի մը ձայնը կը լսուի որ հետըզհետէ կը մօտենայ եւ առաջին բառերը որոշ կը հասնին)

Թռչուն մը կար սարին վերայ

Փետուրներով ոսկեղոյն...

Սիրուշ - Կեցի՛ր վայրկեան մը, լսէ՛, ի՞նչ անոյշ երգի մը ձայնը կու գայ:

Զարուհի - Անպատճառ թափառական աշուղ մը պիտի ըլլայ, սիրոյ երազներով զինովցած:

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Խիկար եւ վերինները

Խիկար - (Չեմքին մէջ չուան մը, գոյն-գոյն գգեստ մը հագուած, գլխուն երկար գլխարկ մը: Ծպտուած լրտես մ'է Բակուր իշխանին: Օդին մէջ մէկ երկու գնդակներ նետելով եւ բռնելով՝ բեմին վրայ կը ցատկէ):

Սիրուշ - (Սուր ճիչ մը հանելով) Ա՛հ...

Զարուհի - Խեղճ մը պիտի ըլլայ:

Խիկար - Ո՛հ, ազնիւ օրհորդ, ես խենթ չեմ, մի՛ վախճաք: Աշխարհիս ամէնէն իմաստուն մարդն եմ: Ինձ համար արքաներու պալատները, իշխաններու զգեստները բաց են: Մարդերու բախտն իմ ձեռքիս մէջն է: Սատանան՝ ուղեմ կը կապեմ, ուղեմ կ'արձակեմ: Կրնամ ձեռքերուս վրայ քալել: Չուան մը ձգեցէք ծառէ ծառ, վրայէն վազելով կ'անցնիմ (Գնդակներն ետեւէ ետեւ օդ կը նետէ եւ կը բռնէ):

Սիրուշ - Անպատճառ պալատի մը հաց-կատակը պիտի ըլլայ:

Խիկար - Ո՛հ, օրհորդ, ես Խիկար կը կոչուիմ, Հայաստանի ամէնէն իմաստուն մարդը: Լսեցի թէ այս վարժարանին մէջ տխուր կեանք մ'ունիք, եկայ ձեզ զուարճացնելու, զրամ չեմ ուզեր, ոչ ալ համբույր. միայն ուրախ ժամ մը անցընէք:

Զարուհի - Բայց ի՞նչպէս անցար պահակներէն:

Խիկար - Պահակներէ՞ն. սատանային ուսն ելայ եւ հոս եկայ:

Սիրուշ - Երթանք, Զարուհի, ես այս մարդէն կը վախնամ:

Զարուհի - Քիչ մը կենանք, շատ զուարճալի կը տեսնուի. նայէ՛, ի՞նչ տարօրինակ հաղուեր է:

Սիրուշ - Եթէ Մեծաւոր Մայրը տեսնէ՛, մեզ խաչ կը հանէ:

Զարուհի - Միւսներն ալ կանչենք:

Խիկար - (Տարօրինակ պարելով)

Թռչուն մը կար սարին վերայ
Փետուրներով ոսկեղոյն.

Բայց նա, կ'ըսեն, հոս է հիմա

Սեւ ամպի մը տակ թաքուն...

Լեփոյ լէ, լէ, լեփոյ լէ, լէ

Երանի որ որսորդ է...

Լեփոյ լէ, լէ, լեփոյ լէ, լէ...

Սիրուշ - Ի՞նչ խենթ ձեւեր կ'ընէ:

Զարուհի - Միւսներն ալ կանչենք: Մարիամ, Շողիկ, Աշխէն, Շուշանիկ, Փառանձեմ:

Գուրսէն ձայն մը - Ի՞նչ կայ, Զարուհի:

Զարուհի - Վար վաղեցէք, խնդալուրան մը:

Սիրուշ - Անպարար մը, անպարար մը, նշանաւոր Խիկարն եկեր է...

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Մայր Գայիանէ, Քոյր Հովսիսիմէ, աղջիկներն ու վերինները

Գայիանէ - (Աղջիկները գուարք աղմուկով բեմ կը վազեն) Կարելի չէ, կարելի չէ այս խենթերը զսպել. որքան աղաւաղան են, այնքան ալ անառակ են:

(Պղնձէ կոնֆին վրայ ուժեղ հարուածներ տալով) Շո՛ւտ, զասարանները մտէք:

Փառանձեմ - Քիչ մը դիտենք, Մեծաւոր Մայր, կ'ըսեն թէ շատ զուարճալի է:

Խիկար - Իմ խոնարհ յարգանքներս, Մեծաւոր Մայր (Լըջօրէն կը խոնարհի):

Գայիանէ - Ո՞վ ես դուն, հոս ի՞նչ զործ ունիս. հիմա պահակները կը կանչեմ քեզ ձերբակալելու:

Խիկար - Ո՛հ, հանգարտէ, անուշիկ քոյրիկ, ես վտանգաւոր մէկը չեմ. ես ուրախութիւն եւ հաճոյք եմ. ես ամէն տեղ եմ. կամ ու չկամ, այսօր հոս, վաղը Տիգրոն. հացի համար չէ իմ կեանքս, այլ զեղարուեստի համար: Իմ մէկ ժամ խաղս ձեր ամբողջ սաղմոսները կ'արժէ:

Զարուհի - (Ընդմիջելով) Շատ շիտակ ըսաւ:

Գայիանէ - Լռէ՛, աներես:

Խիկար - Այո՛, աղջիկս, ես կը սորվեցնեմ խնդալ, զուարճանալ, երջանիկ ըլլալ (միշտ արագելով), ուտել խմել, պարել: Կեանքը երկու երես ունի, տխուր եւ ուրախ. ես ուրախ երեսն եմ: Տեսէք, սա զաւաթ մը ջուրը քթիս ծայրը կը կեցնեմ. սա պնակը կրնամ մատիս ծայրը խաղցնել: Գնդակներն աստղերու պէս վեր կը նետեմ եւ կը բռնեմ:

Հովսիսիմէ - Դուն հացկատակ ես:

Խիկար - Ի՞նչ է հացկատակը:

Հովսիսիմէ - Խենթ, անօթի, քսակահատ, խարերայ:

Խիկար - Ո՛հ, յարգելի քոյրիկ, ես զեղարուեստն եմ, ազնուականներուն համար ծնած: Իմ անունս Տիգրոնէն մինչեւ Բիւզանդիոն լսեր են: Ես կը ճանչնամ Հայաստանի բոլոր ազնուական տուններն ու զգեստները: Մտեր եմ Նորչիրականի, Արծրունիներու, Բաղրատունիներու պալատներէն ներս. հասեր եմ մինչեւ Ծիրանկատար լեռը, Մամիկոնեաններու Ողական ամրոցը: Խաղացեր եմ Վարդան մեծ զօրավարին առջեւ: Հէյ վա՛խ, ի՞նչ օրեր էին:

Շուշանիկ - Ուրեմն, դուն իմ հայրս ճանչցե՞ր ես:

Խիկար - Ո՞վ է քու հայրդ:

Շուշանիկ - Վարդան Մամիկոնեանը:

Խիկար - Մեծ մարդ էր, կեցցէ՛, լաւ մեռաւ: Դուն ալ աղուոր աղջիկ ես:

Գայիանէ - Բերանդ սրբէ, միտքդ չար բաներու մի՛ տանիր:

Խիկար - Քա՛ւ լիցի, քոյր իմ, փափէ սատան, մարանաթայ...:

Շողիկ - Աս ի՞նչ լեզուով կը խօսի:

Խիկար - Ես ամէն լեզու գիտեմ, քթի-բիտս, փրոս, խարաւամպոս, խաճար, մաճար, խախամ:

Բոլորը - (Բարձրաձայն կը խոնարհ):

Խիկար - Դեռ շատ լեզուներ գիտեմ.

Հրեայերէ՞ն կ'ուզէք. չալոմ, հաշեր, շա-

մա: Եւ Մեծաւոր Մայրը զիս կ'ուզէր վը-

որնտել: Խնդացէք, ծիծաղեցէք. սաղ-

մոս կարգալով ձեր խելքը կը ջրօտի այս

բանտին մէջ: Կեանքը դուրսն է, զգուշ

ծաղիկները, սիրել, համբուրել:

Գայիանէ - Լռէ՛, անչնորհք, լեզուդ

Եւայի օձին կը նմանի:

Զարուհի - Ճիշտ սրտէս խօսեցաւ:

Գայիանէ - Զարուհի, Զարուհի, այսօր

«Ողորմեա ինձ» սաղմոսը տասն անգամ օ-

րինակել պիտի տամ:

Զարուհի - (Ցած եւ մեկուսի) Եթէ զիս

հոս գտնես...:

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

Երկու գիւղացիներ եւ վերինները

Ա. Գիւղացի - (Բեմին մէկ անկիւնէն ներս կը մտնեն, տուրակներ ուսերնուն եւ մէջը ապրանքով լեցուն: Իրենք ալ Բակուրի մարդիկն են) Մեր Եշխանուհիներուն համար համով խնձորներ բերի:

Բ. Գիւղացի - Կանաչ թարմ վարունդ, զրամ չենք ուզեր. Աստուծոյ տուածն է:

Ա. Գիւղացի - (Մեկուսի ընկերոջ ալանջէն) Հաւանական է հոս ըլլայ:

Բ. Գիւղացի - Ստացուած լուրերն այդպէս էին:

Խիկար - Եկէք բարեկամներ, դուք ալ զուարճացէք, խեղճ գիւղացիներ էք, ասանկ ազնուական խաղեր ուրիշ տեղ չէք տեսներ (Մեկուսի Ա. գիւղացիին ալան-

ջեն) Հոս է, այդ երկարհասակ վարդերես աղջիկն է:

Բ. Գիւղացի - (Տոպրակէն պտուղներ հանելով) Առէք, խնդրեմ, կերէք շատ համով են:

Խիկար - Խաղա մի՛ խանդարեր կոչա գիւղացի, յետոյ թող ուտեն:

Գայիանէ - Աղջիկներ, ներս քաշուեցէք: Քոյր Հոսի, կոչնակը զարկ (Քոյր Հոսի-սիմէ կոչնակը կը հնչեցնէ):

Շողիկ - Քիչ մ'ալ կենանք, Մեծաւոր Մայր:

Աշխէն - Շատ զուարճալի է:

Շուշանիկ - Ես աճալարար բնաւ չեմ տեսած:

Հոսիսիմէ - Ասիկա սատանան է. խաչ հանեցէք երեսնիդ (Ինքը երեսը կը խաչակնքէ) Յանուն Հօր եւ...:

Խիկար - (Խսկոյն վրայ բերելով) Ո՛չ, բարե քոյրիկ (Թեւերը բանալով) ո՛չ, ես ոսկրով, կաշիով եւ միտով մարդ եմ:

Գայիանէ - Նե՛րս քաշուեցէք. հիմա դուրսէն ուրիշներ ալ կու գան:

Ջարուհի - Մեզ չեն ուտեր որ...:

Փառանձեմ - Վախճալու բան չկայ:

Բոլորը - Քիչ մ'ալ կենանք, քիչ մ'ալ:

Գայիանէ - (Մեկուսի) Ի՛նչ ընենք, յաճախ ստիպուած ենք կամքերնին կատարել. շատերը սարերու եղնիկ են, ազատ կենանքի վարժած, ապա թէ ոչ՝ փախուստ կու տան:

Խիկար - Այս խաղը վերջինն է. ամէնէն հետաքրքրականը: Մա չուանը... դուն... դուն... (Մատով մէկիկ մէկիկ ցոյց կու տայ աղջիկները) դուն կրնա՞ս բռնել (Կանգ կ'առնէ Շուշանիկին առջեւ):

Շուշանիկ - Ինչո՞ւ չէ, կրնամ բռնել (Կը բռնէ չուանի ծայրէն):

Խիկար - Քիչ մը հեռու գացէք, բացուեցէք, զիս պիտի խեղդէք (Աղջիկները կը լայնանան: Շուշանիկին վրայ խորհրդաւոր ձեւեր կ'ընէ ձեռքերով) Ատիճաղ, պատիճաղ... կապեմ, պլլեմ...: (Դառնալով Շուշանիկին) Հիմա քեզ պիտի կապեմ, պիտի պլլեմ չուանով, հանդոյց ալ պիտի ընեմ եւ դուն մէջէն դուրս պիտի ելլես առանց չուանները քակելու: Բայց, բայց զլխուն վրայ լաթ մը պէտք է ձգել (Կամացուկ մը գիւղացիներուն) պատրաստ եղէք: Մեծաւոր Մայր, քու զգեստը շատ լայն է, կտոր մը տուր:

Գայիանէ - Անպատկառ:

Ջարուհի - Հո՛ս, իմ լօգիկս առ:

Խիկար - (Կապկպելով Շուշանիկը) Պատրաստ եղէք: Մէկ... երկու... երեք...

Ա. Գիւղացին - (Որ հուժկու մէկը պէտք է ըլլայ, Շուշանիկին ուսին վրայ առած՝ իսկոյն բեմէն դուրս կը խոյանայ: Իրեն կը հետեւի միւսը՝ լքելով իրենց տոպրակները):

Գայիանէ - Ձիւնը գլխուս. հասէ՛ք, հասէ՛ք: Պահակներ: Հոսի, կոչնակը զարկ: Պահակներ...:

Խիկար - (Ցատկրտելով գիւղացիներուն ետեւէն դուրս կը խոյանայ) Լեփոյ լէ, լէ. լեփոյ լէ, լէ...:

Վարագոյրը կ'իջնէ

(Շարունակելի)

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

• Գ Բ Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն •

ՀԱՅՈՑ ԳԻՐԸ - Հեղինակ՝ Կ. Տիրատուրեան, 1963, Երեւան:

Հայպետհրատի լոյս ընծայած այս հատորը՝ նոյն մարդին մէջ լաւագոյնը կալիլ է նկատել:

148 էջերէ բաղկացած այս գիրքը, հայկական գեղարուեստական գրերու եւ գրականութեան շուրջ 400 տեսակներով կը ներկայանայ, ընտիր եւ դուռնաւոր տպագրութեամբ, քիչ մը հաստիկեկ ու հասարակ թուղթի վրայ:

Հեղինակը, խիստապէս ճարտար եւ ճշկուն ձեռքով արուեստագէտ մը, յաջող կերպով գիտցած է կենանք, երանդ եւ աշխատելուն տալ, պահելով հանդերձ հինին խորքը՝ Սուրբ Մեսրոպի, Խորենացիի, Նարեկացիի եւ մինչեւ մեր օրերու մշակութային երեւոյթներէն իւրաքանչիւրն իր մեկնաբանութեամբ, իր բնոյթով եւ իր առանձնաշատկութիւններով ցուցադրելու. Հայաստանի ծերունի վարպետը, Մարտիրոս Սարեան, որ ստորագրած է գրքին յառաջաբանը, կը գրէ. «Տառերու ուրուագծերուն մէջ բովանդակութիւն մը կայ՝ որ թէ՛ խօսուին է եւ թէ՛ համոզուին»:

Ողջունելի աշխատանք մը, պատուաբեր՝ հեղինակին եւ հրատարակիչներուն, եւ որ կը մաղթենք՝ սկիզբը ըլլայ շարքի մը:

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՏԼԱՍ - Երեւան - Մասկուա, 1961, էջ 12, 8°:

Հայ իրականութեան մէջ եթէ զոյու-թիւն ունենար տարուան հրատարակութիւնը վարձատրող մրցանակ մը, 1961ին համար՝ անտարակոյս՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՏԼԱՍին պիտի չնորհուէր:

Պատուաբեր հրատարակութիւն մը արգարեւ, վայել՝ ակադեմական Հաստա-

տութեան մը, որ հազիւ քսանամեայ է տակաւին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՏԼԱՍը հայ գիտութեան պատմութեան մէջ առաջին ընդհանուր աշխարհագրական եւ քարտիսագրական ստեղծագործութիւնն է, որ իր մէջ կը պարունակէ համեմատական զանազան մեծութիւններով՝ իրարու հետ տրամաբանական կարգով մը չաղկապուած 150 քարտէս, բացատրական ծանօթութիւններով:

Յառաջաբանին մէջ կը կարդանք. «Հայկական ՍՍՌ առաջին աշխարհագրական Ատլասը ընդհանուր գիտատեղեկատու քարտէսագրական աշխատութիւնն է, որ կը պատկերացնէ Հայաստանի բնութիւնը, վարչական բաժանումը, բնակչութիւնը, տնտեսական եւ մշակութային բարգաւաճումը եւ նաեւ Հայաստանի պատմութիւնը»:

Հինգ հիմնական բաժիններէ կը բաղկանայ:

Առաջինը ներածութիւն մըն է, ուր տրուած են Կովկասի եւ Հայկական ՍՍՌի վարչական քարտէսները:

Երկրորդ բաժինը Ատլասի ամենաճաշակուն հատուածն է. կ'ընդգրկէ Ֆիզիքական, երկրաբանական, կլիմայական, երկրագործական, ջրագրական, հողագրական, բուսական եւ կենդանական աշխարհի, ոյժերու զանազան աղբիւրներու եւ բնաշխարհագրական գօտիներու եւ շրջաններու 74 քարտէսներ:

Երրորդ բաժինին մէջ, 12 քարտէսներով, տրուած է բնակչութեան եւ մշակութային շինարարութեան բաշխումը՝ Հայաստանի մէջ:

Չորրորդը տնտեսական քարտէսներու բաժինն է, ուր գետեղուած են 48 քարտէսներ:

Վերջին մասին մէջ, 10 քարտէսներով, համառօտ ակնարկ մը կը տրուի Հայոց պատմութեան, սկսելով Ուրարտուէն մինչեւ մեր ներկայ Հայաստանը:

Հոգեկան անխառն վայելք մըն է մեզի համար, որ կ'ապրինք հայրենիքի կարօտով, նկատելը թէ՛ ինչպէս այս փոքրիկ